$500,000.00-ի Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

ԲԱՑՈՒԱԾ Է ՔԱԼԻՖՈՐՆԻՈՅ ՄԷՋ

Ստորեւ կը հրատարակենք այն հեռագիրը զոր ստացանք Խորհ. Հա-յաստանէն որ ինքնին կը բացատրէ արդէն այս հանգանակութեան օգտակարութեան կարեւորութիւնը:

ՀԵՌԱԳՐԻՆ ՔԸԹԸ

CLASS OF SERVICE
This is a full-rate Telegram or Cablegram unless its deferred character is indicated by a suitable symbol above or preceding the address.

WESTERN UNION
A. N. WILLIAMS
PRESIDENT

1201

SYMBOLS
DL=Day Letter
NL=Night Letter
LC=Deferred Cable
NLT=Cable Night Letter
Ship Radiogram

The filing time shown in the date line on telegrams and day letters is STANDARD TIME at point of origin. Time of receipt is STANDARD TIME at point of destination

.TB84

1945 NOV 8 PM 1 26

T.CDU536 INTL=CD MOSCOU VIA RCA 138 8 0200
ARAM SAROYAN=
FRESNO (CALIF)=

MY RABOTNIKI ISKUSSTV I ARHITEKTURY SHLEM NASH GORIACHII PRIVET I CHUVSTVO GLUBOKOIY BLAGODARNOSTI PREDSTAVITELIAMXA EDINOIY SEMI PROGRESSIVNYH ARMIAN VSEGO MIRA KLAIFORNIIYSKIM ARMIANAM ZA BRATSKUIU POMOSCH OKAZANNUIU SOVETSKOIY ARMENII V DNI VELIKOIY OTECHESTVENNOIY VOIYNY SOVETSKOGO SOIUZA PROTIV NAPAVSHEGO NA SOIUZ FASHIZMA OTPRA ZDNOVAV VMESTE VELIKUIU POBEDU SOVETSKOGO SOIUZA I EGO SOIUZNIKOV NAD CHELOVEKONENAVISNICHESKIM MRAKOBESIEM FASHIZMA ARMIANE SOVETSKOIY ARMENII S NOVOI ENGERGIEIY NE POKLADAIA RUK VKLIUCHILIS V TU GIGANTSKUIU VOSSTANOVITELNUIU RABOTU BRATSKOIU SEMI NARODOV SOVETSKOGO SOIUZA KOTORAIA IZLECHIV NANESENNYE VOIYNOIU TIAYELYE RANU POVEDET NASHU STRANU VPERED PO RUTI KULTURY I PROGRESSA K LUCHSHIM IDEALAM CHELOVECHESTVA VASHA=
POMOSCH DRUZIA BYLA POLEZNA V DNI VELIKOIY OTECHESTVENNOIY VOIYNY ONA BUDET TAKYE POLEZNA IUV DNI LIKVIDATSII POSLEDSTVIIY VOIYNY PRODOLJAIYTE JE VASHE BOLUHOE POLEZNOE DELO NA BLAGO NASHEIY OTCHIZNY SOVETSKOIY ARMENII=
AKADEMIK ARHITEKTURY K ALABIAN KOMPOZITOR A HACHATURIAN.

ՀԵՌԱԳՐԻՆ ՀԱՅԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

Մոսկուա, Նոյ. 8, 1945

Պրն. Արամ Սարոյեանին
Ֆրէզնօ, Կալիֆորնիա.

Մենք գեղարուեստի եւ ճարտարապետութեան աշխատողներս, ջերմ ողջոյններ ենք ուղարկում եւ մեր խորին երախտագիտութիւնը յայտնում ամբողջ աշխարհի յառաջդիմական Հայերի միացող ներկայացուցիչներին, այն եղբայրական օգնութեան համար որը նրանք տուեցին Սովիէթական Հայաստանին Սովիէթական Միութեան մեծ հայրենասիրական պատերազմի օրերին Միութեան վրայ յարձակած Ֆաշիզմի դէմ:

Սովիէթական Հայաստանի Հայերը, տօնելով ամբողջ յառաջդիմական մարդկութեան հետ Սովիէթական Միութեան եւ նրա դաշնակիցների տարած մեծ յաղթանակը Ֆաշիզմի մարդատեաց հնարամըտութեան վրայ, նոր եռանդով, առանց հանգիստ առնելու, լծուել են Սովիէթ Միութեան ժողովուրդների եղբայրական ընտանիքի այն հսկայական աշխատանքին, որը, բուժելով պատերազմի յառաջ բերած ծանր վէրքերը պիտի տանի մեր երկիրը առաջ, մշակոյթի եւ յառաջդիմութեան ուղիով, դէպի մարդկութեան լաւագոյն իտէալները:

Ձեր տուած օգնութիւնը, բարեկամներ, օգտակար եղաւ հայրենասիրական մեծ պատերազմի օրերուն, նաեւ օգտակար պիտի լինի այն պատերազմի հետեւանքների հեռացման օրերին: Ուստի, շարունակեցէք ձեր օգտակար մեծ գործը մեր հայրենիքի, Սովիէթական Հայաստանի ի նպաստ:

Ստորագրած են.— ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ
Կ. ՀԱԼԱԲԵԱՆ
ԵՐԱԺՇՏԱԳԷՏ
Ա. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԺՈՂՈՎ ԵԴԵՄԻ ՄԷՋ

ԵԴԵՄԻ, ՏԱՅՆՈՒԲԱՅԻ, ԹՈՒԼԱՐԱՅԻ, ԵՒ ՎԱՅՍԵԼԻՈՅ ՄԱՍՆԱ- ՃԻՒՂՆԵՐՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՄԲ

ԱՌԱՋՆՈՐԴ, ԳԵՐՇ. Տ. ՄԱՄԲՐԷ ԱՐՔԵՊԻՍ. ԳԱԼՖԱՅԵԱՆԻ

Նոյ. 23-ին, Ուրբաթ երեկոյ, ժամը 7.30-ին, Եդեմի Ազգային Սրահին մէջ:

Պիտի խօսին Հայաստանէն նոր վերադարձած պատգամաւոր-ներ, Պրն. Ա. Գ. Նազըճեան եւ Արժ. Տ. Կրպ. Գալֆաեան, ինչպէս նաեւ ներկայ պիտի ըլլայ եւ պիտի խօսի Ֆրէզնոյէն, Պրն. Արամ Սարոյեան: Պիտի երգէ Եդեմի Երգչախումբը:

Եդեմի, Տայնուպայի, Թուլարայի, Վայսելիոյ եւ շրջակայքի հայեր կը հրաւիրուին ներկայ ըլլալու:

Ներկայ պիտի ըլլայ եւ պիտի խօսի նաեւ Գալիֆորնիոյ նախկին Առաջնորդ, եւ Հարաւային Ամերիկայի Կաթողիկոսական Պատուիրակ Գերշ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿ. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

ԿԱՐԳԱԴԻՐ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ ԵԴԵՄԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՅ ՄԱՍՆԱՃԻՒՂՆԵՐՈՒ

ՃԱՇԿԵՐՈՅԹ ԵՒ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԺՈՂՈՎ ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ ՄԷՋ

ՃԱՇԿԵՐՈՅԹ, *Նոյ. 24-ին, Շաբաթ երեկոյ, ժամը 7.30-ին, Հայ Կրթական Տան սրահը,* 1310, Սաուբի Խոբըրն Էվընիւ: *Սեղանապետի պաշտօնը պիտի վարէ Պրն. Աշոտ Բագրատունի: Պիտի խօսին Խորհ. Հայաստանէն նոր վերադարձող պատգամաւորներ, Պրն. Ա. Գ. Նազըճեան եւ Արժ. Տ. Կրպ. Քհնյ. Գալֆաեան, ինչպէս նաեւ Բիտլիէն Պրն. Մարտիրոս Փիլօեան եւ Ֆրէզնոյէն Պրն. Արամ Սարոյեան: Պիտի երգէ Մէքսիկոյէն, Պրն. Պարզեւ Հունեան, իսկ Օր. Հելէն Անթիկեան պիտի մասնակցի էջրոտիոնով:*

ճաշագին $1.25:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԺՈՂՈՎ, *Նոյ. 25-ին, Կիրակի կէսօրէ վերջ, ճիշդ ժամը 3-ին, Փէթրիէթիք Հոլին մէջ, ատենապետութեամբ Պր. Գր. Ապաճեանի: Բարեգալուստի մէկ երկու խօսք պիտի խօսի Պր. Տիգրան Իզմիրեան: Պիտի խօսին նոյնպէս Հայաստանէն վերադարձող պատգամաւորներ, ինչպէս նաեւ Պր. Մ. Փիլօեան եւ Պր. Արամ* Սարոյեան եւ Հարաւային Ամերիկայի Կաթողիկոսական պատուիրակ Գերշ. Տ. Գարեգին Արքեպիսկոպոս Խաչատուրեան:
Պիտի երգէ, Տիկ. Զարուհի Էլմասեան – Վարդեան, դաշնակի ընկերակցութեամբ Օր. Էլիզապէթ Քիւրքճեանի:

ԿԱՐԳԱԴԻՐ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ Լ. Ա.Ի ՄԱՍՆԱՃԻՒՂԻ

ՃԱՇԿԵՐՈՅԹ ՓԷՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ

Նախագահութեամբ Առաջնորդ, Գերաշնորհ Տ. Մամբրէ Արքե-պիսկոպոս Գալֆաեանի եւ Ատենապետութեամբ Պրն. Կրպ. Սիվաս-լեանի:

Նոյ. 27-ին, Երեքշաբթի երեկոյ, ժամը 7.15-ին, Փէսատինայի Կիլիկիա՝ Հայ Աւետ. Եկեղեցւոյ ընկերական սրահին մէջ:
ճաշագին $1.50:

Պիտի խօսին Հայաստանէն վերադարձող պատգամաւորներ, Պրն. Ա. Գ. Նազըճեան, Արժ. Տ. Կրպ. Քհնյ. Գալֆաեան, ինչպէս նաեւ Բիտլիէն Պրն. Մ. Փիլօեան եւ Ֆրէզնոյէն Պրն. Արամ Սարոյեան:

ԿԱՐԳԱԴԻՐ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ ՓԷՍԱՏԻՆԱՅԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ

Կը խնդրուի Լոս Անճէլըսի, Սէն Ֆէրնանտօ Վէլիի, Լօնկ Պիչի, Սէն Տիէկոյի եւ Փէսատինայի ու շրջակայքի հայ ժողովուրդէն ներկայ ըլլալ եւ քաջալերել այս ժողովները:

Անոնք որ պատեհութիւնը չունին ներկայ ըլլալու իրենց մասնակցութիւնը բերելու համար Բարեգործականի սոյն 500,000 տոլարի հանգանակութեան, կրնան ուղղակի ղրկել իրենց նուէրները Ֆրէզնօ՝ Հ. Բ. Ը. Միութեան դրասենեակը: Չէքերը պէտք է գրուին Բարեգործականի անունով, Հասցէ՝ Արմէնիըն Ճէնէրըլ Պենէվոլէնթ Եունիըն, 2044 Մէրիփօզա Սթ. Ֆրէզնօյ, Գալիֆ.